ՆԵՐԱՌԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԻՆԴԵՔՍԸ ՀՀ-ՈՒՄ*

ԱՇՈՏ ՆԱՆՑԱՆ

Ներածություն

Երկրի տնտեսական առաջընթացի ամենահայտնի ցուցիչը համախառն ներքին արդյունքն է (ՀՆԱ): Այն տվյալ ժամանակահատվածում (եռամսյակ, տարի) երկրի տնտեսական տարածքում արտադրված վերջնական ապրանքների և ծառայությունների ընդհանուր շուկայական արժեքն է: Անվիճելի է, որ ՀՆԱ-ն մակրոտնտեսական կարևոր ցուցանիշ է: Սակայն վերջին տարիներին ավելացել են հեղինակավոր տնտեսագետների մտահոգությունները ՀՆԱ-ի սահմանափակումների վերաբերյալ:

Ըստ մտահոգությունների մի մասի՝ գործող մեթոդաբանությամբ ՀՆԱ-ի կազմում չեն հաշվառվում տնտեսական գործունեության որոշ ոլորտներ: Պատահական չէ վիճակագրական հետևյալ պարադոքսը. թեև վերջին տասնամյակի ընթացքում շեշտակիորեն աճել է համացանցի միջոցով սպառվող բարիքների ծավալը, համաշխարհային ՀՆԱ-ում թվային տնտեսության մասնաբաժինը աննշան է փոփոխվել[1]: Խնդիրն այն է, որ վիճակագրության ժամանակակից մեթոդները դեռևս թույլ չեն տալիս ճշգրտորեն ամրագրել թվային և առցանց որոշ գործառնությունների գինը և ծավալը: Նման խնդիր առկա է նաև ոչ նյութական ներդրումները հաշվառելիս: Իսկապես, ՀՆԱ-ի հաշվարկից որպես կանոն դուրս են մնում այն ներդրումները, որ ձեռնարկությունները կատարում են գիտելիքի կուտակման գործընթացում:

Մտահոգությունների մյուս մասը վերաբերում է այն բանին, որ ՀՆԱ-ն հաշվի չի առնում եկամուտների անհավասարությունը տվյալ հասարակությունում: Խնդիրն այն է, որ ՀՆԱ-ի աճի հետևանքով ձևավորված հավելյալ արդյունքը բնակչության շրջանում կարող է բաշխվել անհավասարաչափ՝ չնպաստելով կենսամակարդակի աճին: Օրինակ՝ վերջին 30 տարիներին ԱՄՆ-ի ՀՆԱ-ն կրկնապատկվել է, մինչդեռ *մեդիանային տնային տնտեսության*[2] եկամուտներն աճել են ընդամենը

---

* Իրականացվել է «Լույս» մշակութային, գիտական, կրթական հիմնադրամի տնտեսական հետազոտություններ իրականացնող խմբի շրջանակներում:

[1] Տե՛ս World Economic Forum, The Inclusive Growth and Development Report 2017, https://www.weforum.org/reports/the-inclusive-growth-and-development-report-2017, էջ 9:

[2] Մեդիանային տնային տնտեսությունը ընտրանքը բաժանում է երկու հավասար մասերի: Մի մասը ստանում է եկամուտ, մյուս մասը՝ ցածր:

16%-ով[3]: Նշենք նաև, որ, ըստ մեթոդաբանության, ՀՆԱ-ի կազմում չի ներառվում ոչ դրամական ավելացված արժեքը: Այսպես, ժամանակի խնայողությունները, որոնք առաջանում են տեղեկատվական նորագույն տեխնոլոգիաների ներդրմամբ, չեն արտացոլվում ՀՆԱ-ի մեծության մեջ:

Նշենք նաև, որ ՀՆԱ-ն չի բավարարում *միջսերնդային արդարության* սկզբունքը այն իմաստով, որ դրա ընթացիկ աճը կարող է ձեռք բերվել ապագա սերունդների բարեկեցության նվազման հաշվին: Իսկապես, տնտեսությունը կարող է հասնել ՀՆԱ-ի ավելի բարձր մակարդակի՝ միաժամանակ աղտոտելով շրջակա միջավայրը կամ սպառելով բնական ռեսուրսները: Նույնիսկ եթե այսպիսի հավելյալ արդյունքը կարճաժամկետ հատվածում ցանկալի է հասարակության համար, ապագա սերունդները կարող են տուժել՝ ստիպված լինելով «վճարել» նախորդների տնտեսական սխալ որոշումների համար:

Հաշվի առնելով այս դիտարկումները՝ 2010-ական թվականներից Համաշխարհային տնտեսական համաժողովի (ՀՏՀ) փորձագետները միացել են ՀՆԱ-ի կատարելագործման աշխատանքներով զբաղվող մասնագետներին: Նրանք «Ներառական աճի և զարգացման զեկույց - 2017»-ում առաջ են քաշել միջազգային նոր ցուցիչ՝ *Ներառական զարգացման (ՆԶ) ինդեքս:* Համանման զեկույց պատրաստվել է նաև 2018 թվականի վերաբերյալ: Ըստ որում, ՆԶ ինդեքսի 2017-ի հաշվարկները կատարվել են 107 երկրների (29 զարգացած և 78 զարգացող), իսկ 2018-ի հաշվարկները՝ 103 երկրների (29 զարգացած և 74 զարգացող) վերաբերյալ:

Սույն ուսումնասիրության նպատակն է համակարգված ձևով ներկայացնել «Ներառական զարգացման զեկույց 2018»-ի այն ուշագրավ դիտարկումները, որոնք վերաբերում են Հայաստանին: Տվյալների համադրմամբ պարզվել է, որ 2018-ին 2017-ի համեմատ ՆԶ ինդեքսը ՀՀ-ում չի փոփոխվել, իսկ Հայաստանի զբաղեցրած դիրքը զարգացող երկրների խմբում բարելավվել է 5 հորիզոնականով: **2018-ին ՆԶ ինդեքսը 3.66 էր, և 74 զարգացող երկրների շարքում Հայաստանը զբաղեցրել է 45-րդ հորիզոնականը**: Նշենք նաև, որ, ըստ ՆԶ ինդեքսի, Հայաստանը իր անմիջական հարևանների շրջանում գրավում է վերջին՝ հինգերորդ հորիզոնականը, իսկ ԵԱՏՄ տարածքում (առանց Բելառուսի)՝ երրորդ:

Մեթոդաբանություն

ՆԶ ինդեքսի հիմքում այն կանխավարկածն է, որ տնտեսական զարգացման հիմնական չափանիշը ոչ այնքան ապրանքների և ծառայությունների արտադրության ծավալների ընդլայնումն է, որքան բնակչության կենսամակարդակի կայուն բարելավումը: Հետևաբար, սոցիալ-տնտեսական առաջընթացը հաշվառելիս (շնչային) ՀՆԱ-ից զատ, անհրաժեշտ է դիտարկել նաև այլ ցուցանիշներ:

[3] Տե՛ս World Economic Forum, ..., էջ 9-10:

Աղյուսակ 1

ՆԶ ինդեքսի կառուցվածքը

Ենթաինդեքս	Ցուցանիշ	Մեկնաբանություն
Աճ և զարգացում	Շնչային ՀՆԱ	ՀՆԱ-ի հարաբերությունը բնակչության թվին
	Աշխատանքի արտադրողականություն	ՀՆԱ-ի հարաբերությունը զբաղվածների թվին
	Առողջ կյանքի սպասվող տևողություն	Տարիների միջին քանակը, որը անհատը ապրում է առողջ կյանքով
	Զբաղվածություն	Զբաղվածների մասնաբաժինը աշխատանքային տարիքի բնակչությունում
Ներառականություն	Եկամուտների Ջինիի գործակից	Որքանով է *զուտ եկամուտների* բաշխվածությունը շեղվում կատարյալ հավասարաչափ բաշխումից (ընդունում է արժեքներ 0-100 միջակայքում, որտեղ 0-ն ցույց է տալիս կատարյալ հավասարություն, իսկ 100-ը՝ կատարյալ անհավասարություն)
	Աղքատություն	*Զարգացած երկրների դեպքում՝* այն բնակչության մասնաբաժինը, որի եկամուտները ցածր են մեդիանային եկամտի մեկ երկրորդից, իսկ *զարգացող երկրների դեպքում՝* այն բնակչության մասնաբաժինը, որի օրական եկամուտները ցածր են 3.2 դոլարից
	Հարստության Ջինիի գործակից	Որքանով է *հարստության* բաշխվածությունը շեղվում կատարյալ հավասարաչափ բաշխումից (ընդունում է արժեքներ 0-100 միջակայքում, որտեղ 0-ն ցույց է տալիս կատարյալ հավասարություն, իսկ 100-ը՝ կատարյալ անհավասարություն)
	Մեդիանային եկամուտ	Օրական շնչային եկամուտների մեդիանան՝ դոլարով
Միջսերնդային արդարություն և կայունություն	Ճշգրտված զուտ խնայողություններ	Զուտ ազգային խնայողությունների մասնաբաժինը ՀՆԱ-ում՝ հաշվի առնելով ներդրումները մարդկային կապիտալում, բնական ռեսուրսների սպառումը, ինչպես նաև կորուստը շրջակա միջավայրի աղտոտումից
	ՀՆԱ-ի ածխածնային պարունակություն	Արտանետված ածխածնի քանակությունը 1 դոլար ՀՆԱ-ի հաշվով
	Պետական պարտք	Պետության պարտքային պարտավորությունների հարաբերությունը ՀՆԱ-ին
	Կախվածության գործակից	15 տարեկանից ցածր և 64 տարեկանից բարձր բնակչության թվաքանակը աշխատանքային տարիքի՝ 15-64 տարեկան 100 մարդու հաշվով

ՆԶ ինդեքսի հենասյուները երեքն են՝ *«Աճ և զարգացում»*, *«Ներառականություն»* և *«Միջսերնդային արդարություն և կայունություն»*: Ենթաինդեքսների այսպիսի ընտրությունը հուշում է, որ, ըստ ՀՏՀ փորձագետների, տնտեսական աճը կարող է փոխակերպվել հասարակական բարեկեցության, եթե այն ներառական է, կայուն և արդարացի: Յուրաքանչյուր են-

թաինդեքս ձևավորվում է 4 առանցքային ցուցանիշների միավորմամբ: Աղյուսակ 1-ը ներկայացնում է ենթաինդեքսները, յուրաքանչյուր ենթաինդեքսի բաղադրիչ-ցուցանիշները, ինչպես նաև վերջիններիս սահմանումները:

Տվյալների ստանդարտացմամբ ՆԶ ինդեքսն ընդունում է արժեքներ 1-7 միջակայքում, որտեղ 1-ը համապատասխանում է վատագույն կատարողականին, իսկ 7-ը՝ լավագույն[4]:

Նշենք, որ զարգացող և զարգացած երկրների ՆԶ ինդեքսները համադրելի չեն, քանի որ, ինչպես տրված է աղյուսակ 1-ում, այս երկրների պարագայում տարբեր են աղքատության սահմանումները: Դա է պատճառը, որ ՀՏՀ-ի՝ ներառական զարգացմանը նվիրված զեկույցներում այդ երկրները դասակարգվում են առանձին-առանձին, ինչը որոշակիորեն սահմանափակում է միջազգային համադրումների շրջանակը: Ըստ որում, 2017-ի զեկույցում դրանց թվաքանակների հարաբերակցությունը 29/78 է, իսկ 2018-ի զեկույցում՝ 29/74:

Հայաստանի գնահատականները միջազգային և տարածաշրջանային համադրումների համատեքստում

2018-ին ՆԶ ինդեքսը ՀՀ-ում 3.66 էր, և 74 զարգացող երկրների շարքում Հայաստանը զբաղեցրել է 45-րդ հորիզոնականը: Գծապատկեր 1-ը ցույց է տալիս, որ 2018-ին 2017-ի համեմատ ՆԶ ինդեքսը չի փոփոխվել: Միաժամանակ, պայմանավորված մրցակից երկրների «դիրքերի թուլացմամբ», զարգացող երկրների խմբում 5 հորիզոնականով բարելավվել է Հայաստանի զբաղեցրած դիրքը:

Գծապատկեր 1

Զարգացող երկրների խմբում ՀՀ վարկանիշային դիրքը ըստ ՆԶ ինդեքսի և շնչային ՀՆԱ-ի (2017 թ. և 2018 թ.)



[4] Մեթոդաբանության համար առավել մանրամասն տե՛ս World Economic Forum, ..., էջ 92-124:

Նկատենք, որ տնտեսական զարգացման այլընտրանքային ցուցիչը՝ շնչային ՀՆԱ-ն, Հայաստանի տնտեսական իրավիճակը ներկայացնում է ավելի «վառ գույներով»: Իրոք, և՛ 2017-ին, և՛ 2018-ին զարգացող երկրների խմբում ըստ շնչային ՀՆԱ-ի ՀՀ-ն զբաղեցրել է ավելի բարձր դիրք, քան ըստ ՆԶ ինդեքսի: Այս դիտարկումից բխում է հետևյալ եզրահանգումը. այն, որ ՀՀ-ում շնչային ՀՆԱ-ն անբավարար է զարգացած աշխարհի համեմատ, թերևս ընդունելի է բոլորի՝ և՛ պետության, և՛ հասարակության համար: Պարզվում է, սակայն, որ այս ցուցանիշը նաև որոշակիորեն գերագնահատված է այն իմաստով, որ ներառականության, միջսերնդային արդարության և կայունության, նաև այլ չափանիշների դիտարկման պարագայում ՀՀ վարկանիշային դիրքը վատթարանում է:

Աղյուսակ 2

ՆԶ ինդեքսի բաղադրիչները ՀՀ-ում (2017 թ. և 2018 թ.)

Ենթաինդեքս	Ցուցանիշ	Տարեթիվ		Ցուցանիշի փոփոխություն	
		2017	2018		
Աճ և զարգացում	Շնչային ՀՆԱ, ԱՄՆ դոլար	3793	3925	↑	132
	Աշխատանքի արտադրողականություն, ԱՄՆ դոլար	18376	18877	↑	501
	Առողջ կյանքի սպասվող տևողություն, տարի	66.9	66.9	→	0
	Զբաղվածություն, տոկոս	52.9	52.9	→	0
Ներառականություն	Եկամուտների Ջինիի գործակից	34.9	36	↑	1.1
	Աղքատություն, տոկոս	14.6	13.5	↓	-1.1
	Հարստության Ջինիի գործակից	74.3	58.3	↓	-16
	Մեդիանային եկամուտ, ԱՄՆ դոլար	5.4	5.7	↑	0.3
Միջսերնդային արդարություն և կայունություն	Ճշգրտված զուտ խնայողություններ, տոկոս	0.9	3.7	↑	2.8
	ՀՆԱ-ի ածխածնային պարունակություն, կգ/ԱՄՆ դոլար	899.3	899.3	→	0
	Պետական պարտք, տոկոս	46.9	51.8	↑	4.9
	Կախվածության գործակից, տոկոս	41.3	44.9	↑	3.6

Աղյուսակ 2-ը ներկայացնում է ՀՀ-ում ՆԶ ինդեքսի բաղադրիչների արժեքները 2017 և 2018 թվականներին: Ինչպես տեսնում ենք, 2017-2018 թթ. «Աճ և զարգացում» ենթաինդեքսի ցուցանիշներից շնչային ՀՆԱ-ն և աշխատանքի արտադրողականությունը բարելավվել են, իսկ

առողջ կյանքի սպասվող տևողությունը և զբաղվածությունը մնացել են անփոփոխ: Համադրելով զարգացող երկրների տվյալները՝ կարելի է արձանագրել, որ 2018-ին ՀՀ-ն նպաստավոր արդյունքներ է գրանցել առողջ կյանքի սպասվող տևողության գծով՝ներառվելով զարգացող երկրների լավագույն 20%-ում[5]: Միաժամանակ, բավական ցածր է զբաղվածության մակարդակը, որի ցուցանիշով 2018-ին ՀՀ-ն հայտնվել է զարգացող երկրների վատագույն 40%-ում:

2017-2018 թթ. «Ներառականություն» ենթաինդեքսի ցուցանիշներից վատթարացել է միայն եկամուտների Ջինիի գործակիցը[6]: Այս առումով անհրաժեշտ է արձանագրել, որ սոցիալական բևեռացումը ՀՀ-ում բավականին շոշափելի է: Բայց եթե որպես համեմատության հիմք ընդունենք ոչ թե զարգացած, այլ զարգացող երկրները, ապա կստանանք անսպասելի գնահատականներ: Իսկապես, 2018-ի դրությամբ հարստության հավասարությամբ Հայաստանը զարգացող երկրների լավագույն 20%-ի խմբում է, իսկ եկամուտների հավասարությամբ՝ լավագույն 40%-ի: Մյուս 2 ցուցանիշներով՝ մեդիանային եկամտի և աղքատության մակարդակով[7] ՀՀ-ն զարգացող երկրների սանդղակում զբաղեցնում է միջին դիրքեր:

Ինչ վերաբերում է «Միջսերնդային արդարություն և կայունություն» ենթաինդեքսին, ապա 2017-2018 թթ. դրական միտում է արձանագրել ճշգրտված զուտ ազգային խնայողությունների մասնաբաժինը ՀՆԱ-ում: Մյուս 3 ցուցանիշները, սակայն, չեն բարելավվել: Մասնավորապես աճել են պետական պարտք-ՀՆԱ հարաբերակցությունը և կախվածության գործակիցը՝ ավելացնելով պետական բյուջեի ծանրաբեռնվածությունը: Իսկ ՀՆԱ-ի ածխածնային պարունակությունը մնացել է անփոփոխ և չափազանց բարձր: Անդրադառնալով ՀՀ հարաբերական դիրքին՝ հարկ է նշել, որ ՀՆԱ-ի ածխածնային պարունակությամբ Հայաստանը դասվում է զարգացող երկրների վատագույն 20%-ի շարքին: Իսկ կախվածության գործակիցը, չնայած աճին, շարունակում է Հայաստանը դիրքավորել զարգացող երկրների լավագույն 20%-ի սեգմենտում:

Անցնելով միջազգային համեմատություններին՝ նշենք, որ արդեն երկու տարի անընդմեջ (և՛ 2017-ին, և՛ 2018-ին) Նորվեգիան ՆԶ միջազգային սանդղակի առաջին հորիզոնականում է: Չնայած նավթագազային արդյունաբերության «վայրիվերումներին»՝ խելամիտ հարկաբյուջետային քաղաքականության շնորհիվ Նորվեգիային հաջողվել է խթանել ներառական տնտեսական աճը: Պատահական չէ, որ 2018-ի

[5] Ցուցանիշների բաշխվածության համար տե՛ս World Economic Forum, The Inclusive Development Index 2018, https://www.weforum.org/reports/the-inclusive-development-index-2018, էջ 20-23:

[6] Վերհիշենք, որ Ջինիի գործակցի աճը նշանակում է անհավասարության խորացում:

[7] Նկատենք, որ աղքատության մակարդակի՝ աղյուսակ 2-ում ներկայացված տվյալը տարբերվում է ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակած ցուցանիշից: Սա պայմանավորված է աղքատության սահմանումների տարբերությամբ:

տվյալներով Նորվեգիան գրանցել է մեդիանային կենսամակարդակի առաջին ամենաբարձր ցուցանիշը, եկամուտների անհավասարության երկրորդ ամենացածր արդյունքը, ինչպես նաև ածխածնային արտանետումների երրորդ ամենացածր ցուցանիշը: Շնչային ՀՆԱ-ով Նորվեգիան զբաղեցնում է երկրորդ հորիզոնականը՝ զիջելով միայն Լյուքսեմբուրգին:

Կայուն է ՆԶ սանդղակի նաև վերջին հորիզոնականը, որտեղ հանգրվանել է Մոզամբիկը և՛ 2017-ին, և՛ 2018-ին: Մոզամբիկը դասվում է երկրների վատագույն 20%-ի շարքին 12 ցուցանիշներից 8-ի գծով: Այն հայտնվել է հարատև լճացման տիրույթում, որին բնորոշ են աշխատանքի ցածր արտադրողականությունը, ցածր մեդիանային կենսամակարդակը, ինչպես նաև բարձր աղքատությունը:

Աղյուսակ 3

Զարգացող երկրների խմբում Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի մի շարք երկրների կատարողականներն ըստ ՆԶ ինդեքսի և շնչային ՀՆԱ-ի (2018 թ.)

Երկիր	ՆԶ ինդեքս	ՆԶ հորիզոնական	Հորիզոնականը ըստ շնչային ՀՆԱ-ի
Լիտվա	4.86	1	1
Հունգարիա	4.74	2	4
Ադրբեջան	4.69	3	26
Լատվիա	4.67	4	5
Լեհաստան	4.61	5	2
Խորվաթիա	4.48	7	6
Ռումինիա	4.43	10	15
Բուլղարիա	4.41	11	18
Ղազախստան	4.26	15	13
Ռուսաստան	4.20	19	9
Հյուսիսային Մակեդոնիա	4.10	25	29
Ալբանիա	4.08	28	31
Մոլդովա	4.00	31	49
Վրաստան	3.99	32	33
Սերբիա	3.70	43	27
Հայաստան	3.66	45	36
Ուկրաինա	3.42	49	43
Ղրղզստան	3.36	51	63
Տաջիկստան	3.30	54	65

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 3-ից, երկու չափանիշների դեպքում էլ զարգացող երկրների առաջատարը Լիտվան է: Համաձայն ՆԶ ինդեքսի՝ զարգացող երկրների լավագույն տասնյակում են Արևելյան

Եվրոպայի ևս 5 երկրներ՝ Հունգարիա (2), Լատվիա (4), Լեհաստան (5), Խորվաթիա (7) և Ռումինիա (10): Այս տնտեսությունները շահեկանորեն առանձնանում են ներառականության հայտանիշով՝ վերջին տարիներին արձանագրելով մեդիանային եկամտի աճ և հարստության անհավասարության մեղմում: Պարզ է, որ անդամակցությունը Եվրոպական միությանը բարեբեր է ազդել այս երկրների կատարողականների վրա:

Ինչ վերաբերում է Եվրասիական տնտեսական միությանը[8], ապա այստեղ ակնհայտ առաջատարները Ղազախստանն ու Ռուսաստանն են: Ղազախստանը գլխավորում է վարկանիշային աղյուսակը՝ ըստ ՆԶ ինդեքսի, իսկ Ռուսաստանը՝ ըստ շնչային ՀՆԱ-ի: Առանձնակի ուշադրության են արժանի գործընկեր Ռուսաստանի ցուցանիշները: «ՆԶ ինդեքս - 2018» զեկույցը փաստում է, որ Ռուսաստանը հաղթահարել է 2015-ի տնտեսական անկումը, բայց աշխատանքի արտադրողականության աճը դեռ շարունակում է մնալ ցածր: Մյուս կողմից՝ թեև աղքատության մակարդակը ցածր է, իսկ մեդիանային կենսամակարդակը՝ համեմատաբար բարձր, Ջինիի բարձր գործակիցը վկայում է եկամուտների և հարստության ծայրահեղ բևեռացման մասին: Բացի այդ, Ռուսաստանում ցածր է պետական պարտք-ՀՆԱ հարաբերակցությունը, սակայն ՀՆԱ-ի ձևավորումը շարունակում է ուղեկցվել վնասակար արտանետումների մեծ ծավալով (տե՛ս հավելվածի աղյուսակը):

Ե՛վ ՆԶ ինդեքսով, և՛ շնչային ՀՆԱ-ով Հայաստանը ԵԱՏՄ շրջանակներում երրորդ հորիզոնականում է՝ առաջ անցնելով միայն Ղրղզստանից: Մասնավորապես, Հայաստանը 1 շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ով գերազանցում է Ղրղզստանին շուրջ 4 անգամ (տե՛ս հավելվածի աղյուսակը), իսկ ՆԶ ինդեքսի գծով՝ շուրջ 9%-ով (տե՛ս աղյուսակ 3):

Աղյուսակ 4

Զարգացող երկրների խմբում ՀՀ և հարևան երկրների կատարողականներն ըստ ՆԶ ինդեքսի և շնչային ՀՆԱ-ի (2018 թ.)

Երկիր	ՆԶ ինդեքս	ՆԶ հորիզոնական	Հորիզոնականը ըստ շնչային ՀՆԱ-ի
Ադրբեջան	4.69	3	26
Թուրքիա	4.26	16	7
Իրան	4.08	27	28
Վրաստան	3.99	32	33
Հայաստան	3.66	45	36

[8] ԵԱՏՄ անդամ պետություններից Բելառուսը ընդգրկված չէ ՆԶ ինդեքսի 2017-ի և 2018-ի հաշվարկներում:

Հավելված

ՆԶ ինդեքսի բաղադրիչները ՀՀ-ում, նրա հարևան երկրներում, ինչպես նաև Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի մի շարք երկրներում (2018թ.)

Երկիր	Աճ և զարգացում				Ներառականություն				Միջսերնդային արդարություն և կայունություն			
	Շնչային ՀՆԱ, ԱՄՆ դոլար	Աշխատանքի արտադրողականություն, ԱՄՆ դոլար	Առողջ կյանքի սպասվող տևողություն, տարի	Զբաղվածություն, տոկոս	Եկամուտների Ջինիի գործակից	Աղքատություն, տոկոս	Հարստության Ջինիի գործակից	Մեդիանային եկամուտ, ԱՄՆ դոլար	Ճշգրտված զուտ խնայողություններ, տոկոս	ՀՆԱ-ի ածխածնային պարունակություն, կգ/ԱՄՆ դոլար	Պետական պարտք, տոկոս	Կախվածության գործակից, տոկոս
Լիտվա	15873	60195	66.1	53.9	34.2	2.7	51.6	18.2	18.8	63.7	40	50.5
Հունգարիա	14840	57179	67.4	51.2	28.7	1	45.3	18.2	11.3	48.3	74.2	47.9
Ադրբեջան	5859	33242	64.7	61.9	28.6	2.7	51	8.5	15.9	145.4	37.7	40.9
Լատվիա	14715	51112	67.1	54.5	36.3	0.9	53.6	25.2	1.9	49.6	34.3	53.3
Լեհաստան	15049	55716	68.7	53.2	32.1	0.3	71.7	20.5	11	82.9	54.2	44.9
Խորվաթիա	14372	54122	69.4	45.1	29.3	1.9	49.8	15.9	10.4	55.3	84.4	51.5
Ռումինիա	10081	48450	66.8	52.1	33	4.5	62.3	8.7	7	81.8	39.2	48.7
Բուլղարիա	7929	41347	66.4	49.8	33.9	3.8	52.9	15.3	11.1	164.3	27.8	52.8
Ղազախստան	10570	45640	63.3	67.7	28.8	0.4	92.6	9.8	10	285.1	21.1	52.1
Թուրքիա	14071	57438	66.2	45.1	39.8	2.4	81.8	13.1	8.4	57.5	29.1	49.8
Ռուսաստան	11099	45832	63.4	59.7	43.9	0.3	82.6	17.1	9.3	213.5	17	45.1
Հյուսիսային Մակեդոնիա	5223	38185	67.5	40.9	36.1	10	56.4	9	5.6	123.9	38.7	42.2
Իրան	5758	55814	66.5	39.7	38.8	2.5	67.3	12.5	-	313.4	35	40.6
Ալբանիա	4712	31256	68.8	42.1	38.6	7.7	44.8	6.5	6.6	47.7	71.5	44
Մոլդովա	2063	12460	64.9	40.2	33.7	1.4	47.9	8.5	12.1	249.9	38.1	35.2
Վրաստան	4080	17707	66.4	59.6	40.5	25.3	66.8	5.1	10	82.7	44.9	50.8
Սերբիա	5852	29524	67.7	42.9	34	1.4	54.2	11.3	-2.5	235.2	74.1	50.1
Հայաստան	3925	18877	66.9	52.9	36	13.5	58.3	5.7	3.7	899.3	51.8	44.9
Ուկրաինա	2906	15845	64.1	53.9	26.3	0.5	90.1	10.2	1	347	81.2	45.8
Ղրղզստան	1038	8171	63.9	58.2	34.1	23.3	62.9	4.4	-1.1	469.2	58.5	55.9
Տաջիկստան	968	6936	62.1	61.2	44.7	20	53.5	5.3	-6	1104.6	35.3	62.7

Ուշագրավ է, որ աղյուսակ 4-ում ներկայացված երկու դասակարգումները նման են՝ բացառությամբ առաջին և երկրորդ հորիզոնականների: Իսկապես, երկու դեպքում էլ տարածաշրջանի հետնապահը Հայաստանն է, չորրորդը՝ Վրաստանը, իսկ երրորդը՝ Իրանը: Համաձայն ՆԶ ինդեքսի՝ տարածաշրջանի առաջատարը Ադրբեջանն է, նրան հաջորդում է Թուրքիան: Իսկ ըստ շնչային ՀՆԱ-ի՝ առաջատարը Թուրքիան է, որին հաջորդում է Ադրբեջանը:

Ակնհայտ է, որ այս իրավիճակը նպաստավոր չէ ՀՀ-ի համար: Նույն եզրակացությանը հանգել էինք «Լույս» հիմնադրամի նախորդ ուսումնասիրություններում[9]՝ նշելով, որ կենսապայմանները Հայաստանում բավական խնդրահարույց են: Այս հանգամանքը պահանջում է արմատական վերանայումներ երկրի սոցիալ-տնտեսական ռազմավարությունում:

Բանալի բառեր – *Համաշխարհային տնտեսական համաժողով, ներառական զարգացման ինդեքս, համախառն ներքին արդյունք, Ջինիի գործակից, զբաղվածություն, աղքատություն*

АШОТ НАНЯН – *Индекс инклюзивного развития в РА.* – Принимая во внимание ограничения валового внутреннего продукта (на душу населения) как критерия социального благосостояния, в 2017 году эксперты Всемирного экономического форума предложили альтернативную меру – Индекс инклюзивного развития (ИИР). В статье обобщается и анализируется Отчёт об инклюзивном развитии–2018, который заслуживает внимания с точки зрения Армении. Констатируется, что по состоянию на 2018 год из 74 развивающихся стран Армения занимает 45-е место по ИИР. Важно отметить, что её рейтинг ещё ниже по ВВП на душу населения. В сочетании с другими тревожными выводами, это наблюдение требует переосмыслить социально-экономическую стратегию страны.

Ключевые слова: *всемирный экономический форум, индекс инклюзивного развития, валовой внутренний продукт, коэффициент Джини, занятость, бедность*

ASHOT NANYAN – *Inclusive Development Index in RA.* – Taking into account the limitations of the (per capita) Gross Domestic Product as a criterion of social welfare, the experts of the World Economic Forum proposed an alternative measure - Inclusive Development Index (IDI) in 2017. In the present article, we summarize and analyze those results of "The Inclusive Development Report 2018" that are noteworthy from the perspective of Armenia. We document that as of 2018, among 74 developing countries, Armenia ranks 45th on the IDI. Importantly, its ranking is even lower by per capita GDP. Combined with other alarming findings, this observation requires reevaluating of the social-economic strategy of RA.

Key words: *World Economic Forum, Inclusive Development Index, Gross Domestic Product, Gini coefficient, employment, poverty*

Ներկայացվել է՝ 02.04.2020
Գրախոսվել է՝ 16.04.2020
Ընդունվել է տպագրության՝ 25.05.2020

---

[9] Տե՛ս «Լույս» հիմնադրամ, Միջազգային կառույցների կողմից հրապարակված ցուցանիշների ուսումնասիրություն, «ՀՀ մարդկային ներուժի զարգացման ինդեքսները և ցուցանիշները – 2019», https://www.luys.am/index.php?m=yearRep&lang=arm&p=186: